ԹԻՎ 2 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 8-Ա

« 22 » Սեպտեմբերի 2023թ.
ք. Երևան

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐՆ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ուսումնասիրելով Երևանի ավագանու ընտրություններում թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում ձևավորված տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրը՝ 2023 թվականի սեպտեմբերի 17-ին արձանագրված խախտում-ների վերաբերյալ գնահատականները՝ թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում առկա գրառումները

2023 թվականի սեպտեմբերի 17-ին տեղի են ունեցել Երևանի ավագանու ընտրություններ: Ընտրությունների նախապատրաստման և անցկացման համար թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում կազմավորվել է թվով 57 ընտրական տեղամաս, սահմանվել են թվով 57 տեղամասային կենտրոն և կազմավորվել թվով 57 տեղամասային ընտրական հանձնաժողովներ:

Թվով 57 տեղամասերից 37 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում գրառումներ առկա չեն: Այդ տեղամասերն են՝ 2/2, 2/5, 2/6, 2/7, 2/8, 2/10, 2/11, 2/13, 2/14, 2/15, 2/19, 2/20, 2/21, 2/22, 2/23, 2/25, 2/29, 2/30, 2/31, 2/32, 2/34, 2/37, 2/38, 2/39, 2/40, 2/41, 2/43, 2/44, 2/45, 2/46, 2/47, 2/48, 2/49, 2/50, 2/51, 2/52, 2/53:

1.Թիվ 2/1 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումները՝

1) «Ընտրատեղամաս մուտք է գործել անհայտ անձ, որը չի քվեարկել, զրուցել է ընտրատեղամասի նախագահի հետ և դուրս է եկել:»

2) «Դիտորդի առարկություն է եղել փակել քվեատուփի տակի փոքր անցքերը՝ մոտ 3 սմ տրամագծով: Հանձնաժողովի անդամների քվեարկության արդյունքում փակվեց քվեատուփի տակի հատվածում գտնվող անցքերը:»

3) «Տեսախցիկից չի երևում տեխնիկական մասը:»

4) «Սեղանին կար գրված քվեաթերթիկ 1, քվեաթերթիկ 2, որը կարող է շփոթություն առաջացնել:»

5) «Քվեաթերթիկ 1 և 2 գրառումները, որոնք փակցված են նախատեսված սեղանին շփոթմունք չեն առաջացրել և գրված են գրանցամատյանում նշված կարգով /հայտնել է հանձնաժողովի նախագահը/:»
6) «Ընտրողը ստացել է սարքավորումից կտրոն և հրաժարվել ընտրություն կատարել, որը խոտանվել է:»
7) «Ընտրողը առանց դրոշմանիշի ծրարը գցել է քվեատուփ:»

2.Թիվ 2/03 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝
1) «Արձանագրություն - Ժամը 18:40-ի սահմաններում թիվ 2/3 ընտրատեղամասում տեղի է ունեցել միջադեպ: Ընտրատեղամաս են մտնում երկու ընտրող, ովքեր ի սկզբանե փորձել են սադրել նախ մասնագետներին, ապա պատասխան չստանալով շարունակում են ընտրության ընթացքը: Վերցնելով քվեաթերթիկները մտել են քվեախցիկ, ընտրողներից մեկը կատարելով ընտրությունը մնացել է ընտրատեղամասում սպասելով երկրորդ ընտրողին: Այդ պահին երկրորդ ընտրողը սկսել է պնդել, որ իրեն չի տրամադրվել երկրորդ համարի քվեաթերթիկը:
Այդ պահին առաջինը ևս պնդել է, որ իրեն ևս չէր տրամադրվել երկրորդ համարի քվեաթերթիկը: Հանձնաժողովի անդամ Անուշ Զուրաբյանը առաջարկել է տրամադրել երկրորդ համարի թերթիկը, սակայն ընտրողը պնդել է, որ ինքը մոտեցնի: Վեճին միջամտել է Արսեն Աբրահամյանը՝ ասելով, որ հանձնաժողովի անդամը իրավունք չունի մոտենալ խցիկին և հորդորել, որ արդեն ընտրություն կատարած ընտրողը դուրս գա քվեասենյակից: Այդ ամենին ի պատասխան սկսել են ընտրողները վիրավորել հանձնաժողովի անդամներին: Այնուհետև հանձնաժողովի նախագահը մոտեցել և հրավիրել է ոստիկաններին:
Համաձայն եմ արձանագրությանը, որի համար ստորագրում են
Հանձնաժողովի անդամ Մ. Հովսեփյան
Հանձնաժողովի անդամ Ն. Ավետիսյան
Արձանագրությունը գրված է ճիշտ
Հանձնաժողովի անդամ Զուրաբյան Անուշ 077-88-91-66
Արձանագրությունը գրված է ճիշտ
Հանձնաժողովի անդամ Արսեն Աբրահամյան 099 93 56 66
Արձանագրությունը գրված է ճիշտ
Հանձնաժողովի քարտուղար ստորագրություն 094 221 201
Արձանագրությունը գրված է ճիշտ ինչի համար ստորագրում եմ
Հանձնաժողովի անդամ Խաչատրյան Արման 094292525
Մասնագետ
Համաձայն եմ գրվածի հետ, որ եղել է սադրանք
Ա. Սարիբեկյան 077773708
Համաձայն եմ արձանագրության հետ
Էլեն Հովհաննիսյան 099 48 60 75
Համաձայն եմ արձանագրության հետ
Էլեն Մկրտչյան 098 89 98 69
Նախագահ Լ. Առուստամյան»

3.Թիվ 2/4 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումները՝
1)«Ընտրատեղմասի մուտքի դիմացի սյան վրա /~15 մետր/ փակցված է կուսակցության փոքր պաստառ:»

2)«Ընտրական տեղամասի տարածքում առկա է անձ ով չհանդիսանալով ընտրող գտնվում է ընտրական տարածքում և դիմավորում է այլ ընտրողների, զրուցում նրանց հետ: Ոստիկանները բավարարվել են միայն մեկ զգուշացումով, դրանից հետո գործողությունը կրկնվել է, փաստացի ոստիկանները հրաժարվել են իրականացնել իրենց գործառույթը:»

4.Թիվ 2/9 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

1) «Քաղաքացին քվեախցիկից մոտեցել է անդամին որպեսզի անդամը ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնի, սակայն հրաժարվեց տալ կտրոնը մեկնաբանելով, որ այն ճղել և թողել է արկղի մեջ: Վերջինս հրաժարվեց հետ վերադառնալ և կտրոնը բերել, փոխարենը ճղեց իր ծրարն ու քվեաթերթիկը ու տարավ իր հետ: Հանձնաժողովի նախագահը գտավ կտրոնը և տվեց համապատասխան անդամին:»

5. Թիվ 2/12 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումները՝

1) «Դրսից օտար մարդ մոտենում է տեղամաս և տեխ. սարքի մասնագետից թիվ է հարցնում և պատասխան է ստանում: Հանդիսանում է ՔՊ կուսակցության վստահված անձերի պատասխանատու: Նույն անձը ընտրատեղամասից գտնվելով 20 մետր հեռավորության վրա ուղղորդել է մարդկանց: 11:00»

2) «Սույն դեպքից 5 րոպե անց մոտենում է Ոստիկանության աշխատակիցը և մասնագետներից ընտրողների քանակ է հարցնում: 11:05»

6.Թիվ 2/16 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

1) «Սույն թվականի 2023թ. սեպտեմբերի 19-ին կայացած ընտրությունների ժամանակ ընտրողներից մեկը մոտեցավ հանձնաժողովի անդամին և տեղեկացրեց, որ ոչ տեխնիկական սարքի կնքված կտրոնը կփոխանցի, ոչ էլ քվեարկության ծրարը, որի արդյունքում 1 կտրոնի թիվը պակաս է: Այդ ժամանակ քվեատուփի մոտ եղել է Շահբազյան Արթուրը:»

2) «15:50 Ընտրողներից մեկը կտրոնը չի ներկայացրել, որից հետո տվյալ ընտրողի ծրարը մարել ենք հանձնաժողովի անդամների և բոլոր ներկաների ներկայությամբ:»

7.Թիվ 2/17 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

1) «Մատյանում ընտրողը չի ստորագրել և ընտրություն չի կատարել, սակայն տեխնիկական սարքից վերցրել է քվեարկության կտրոն: Այդ իսկ պատճառով տեղամասի ընտրողների կտրոնների թիվը մեկով ավել է մատյանների թվից:»

8.Թիվ 2/18 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումները՝

1) «Արձանագրություն - N 766-ը շփոթեց և ստորագրեց N 767-ի փոխարեն:»

2) «Արձանագրություն - Քաղաքացի Հակոբյան Մարգարիտը երկար ժամանակ քվեախցում էր և կարծես նկարահանում էր իր ընտրությունը, որը նկատել է դիտորդ Օրդինյան Աիդան: Սակայն նկատելուց և դիտողությունից հետո նա պնդեց, որ չկա իր նախընտրելի թեկնածուի համարը: Թերթիկները մարվեց, տրվեց այլ թերթիկների խումբ: 2-րդ անգամ նորից դիտորդի և նախագահի կողմից նկատվեց նկարելու չխկոցը, ընտրողը հաստատեց, որ նկարել է: փաստը արձանագրված է /003553484/»

3) «Դիտորդ Աիդա Օրդինյանը նկատելով, որ քաղաքացի Հակոբյան Մարգարիտը պայուսակից հանում է հեռախոսը քվեախցիկի հետևում, տեղեկացրեց

հանձնաժողովի նախագահին, ով անմիջապես մոտեցավ ընտրողին՝ վերցնելով հեռախոսը: Ընտրողը պնդում էր, որ ցանկանում էր տեսնել, թե որ համարի ներքո է իր նախընտրած ուժը, ինչին ի պատասխան հանձնաժողովի նախագահը մարեց նախորդ քվեաթերթիկների խումբը՝ տրամադրելով նորը: Քաղաքացու 2-րդ ընտրության ժամանակ դիտորդ Տիգրան Սիմոնյանը նկատեց, որ քաղաքացին նկարում է և լսեց նկարելու ձայնը, որը չժխտեց քաղաքացին:»

4)«Արձանագրություն

Վարդանյան Ռաֆիկ Գալուստի քաղաքացին /AV0433373/ 2-րդ համարի քվեաթերթիկը դուրս էր հանում տեղամասից: Ականատեսներն էին՝

Անդամ՝ Նանյան համբարձում

Վստահված անձ Սևոյան Արսեն

Վստահված անձ Նարինե Դավթյան

Նախագահ Նարինե Մարկոսյան

ընտրող Վարդանյան Ռաֆիկ»

9. Թիվ 2/24 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումները՝

1) «Քվեաթերթիկների սեղանի տակ գրված «քվեաթերթիկ 1 » և «քվեաթերթիկ 2» գրությունները, հեռացվել են ժամը 17:00-ի դրությամբ:»

2) «Քվեարկողների ցուցակները գտնվում են բարձր և դժվար դիտելի վայրում:»

10.Թիվ 2/26 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

1) «Ս. թ. ՏԻՄ ընտրության ընթացքում մատյան N 2-ում տեղի է ունեցել վրիպում Օսսաննա Սերոժի Թարվերդյանը ստորագրել է Յուրա Ասքանազի Զազյանի փոխարեն:»

11.Թիվ 2/27 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումները՝

1) «Ժամը 19:55 րոպեին թիվ 2/27 ընտրատարածքային տեղամաս է եկել քաղաքացին, ստացել է քվեաթերթիկներ և անցել քվեախուց քվեարկելու: Որից հետո դուրս է եկել ծրարով և ծրարի մեջ չէր երևում քվեաթերթիկը: Հանձնաժողով անդամների և անձամբ նախագահի կողմից նկատել են դա, որից հետո նրան հորդորեցին քվեաթերթիկը հորդորովեց ուղղել: Տվյալ անձը հանել է քվեաթերթիկը, որից հետո հանձնաժողովի անդամը տեսնելով և նախագահը տեսնելով թե ում է ընտրել տվյալ անձը, հիստերիկ շարժումներով վերցրեց քվեաթերթիկը և ծրարը սկսեց պատռել: Հետո հորդորեցին նոր քվեաթերթիկները տալ քաղաքացուն և նա գնա նոր ընտրության, բայց նա չհամաձայնվեց: Հետո կազմեց արձանագրություն և ստորագրեցին միայն հանձնաժողովի ՔՊ անդամները և ՏԸ ներկայացուցիչները:»

2) «Արտուշ Աբելյանի արձանագրությունը համարում են անհիմն, քանի որ ընտրատեղամասում ամբողջությամբ պահվել է օրենքը:»

3) «Ուղիղ ժամը 20:00-ին ընտրատեղամաս է հրավիրվել ոստիկանը՝ նախագահի կանչով, 1207 համարի ընտրողին դուրս հրավիրելու համար: Վերջինս, դուրս գալով խցիկից, ծրարից հանել էր իր քվեաթերթիկը՝ բոլորի ներկայությամբ: Որից հետո ընտրատեղամասի նախագահը մարել է ծրարը և չի թողել ընտրողին մասնակցել ընտրությանը: Ոստիկանները նույնպես արձանագրել են դեպքը և դուրս հանել:»

12.Թիվ 2/28 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

1) «Քվեատուփի տակ առկա են անցքեր: Սահմանադրությամբ սահմանված օրենք չկա:»

13.Թիվ 2/33 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումները՝

1) «Ընտրողներից մեկը մոտեցել է ընտրատեղամաս, ստացել է քվեաթերթիկները, ծրարը և կտրոնը:Քվեաթերթիկը ծրարով պատռել է քվեախցում և միայն կտրոնը թողել քվեատուփի սեղանի մոտ: /ժամը 14:40/»

2) «Քվեատուփի համար պատասխանատու անդամը դրոշմանիշը փակցնելիս մի փոքր հատվածը կպել է մատին: /ժամը 14:51/»

3) «Հաշվարկի ժամանակ փաստացի եղած կտրոնների թիվը և դրա ամփոփ ներկայացված կտրոնների տեղեկագիրը չի համապատասխանում՝ ընդհանուր պետք է լինի 396, բայց ցույց է տալիս 395:»

14.Թիվ 2/35 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումները՝

1) «Տեղամասի կահավորումն իրականացված չէ սահմանված ձևով, մասնավորապես ցուցակ 1, ցուցակ 2 գտնվում են իրար կողք, նոր հաջորդիվ դրված են քվեաթերթիկ 1 և քվեաթերթիկ 2 սեղանները:»

15.Թիվ 2/36 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումները՝

1) «Քվետատուփի տակ առկա են 4 անցքեր:»

2) «Տեխնիկական 3 սարքերը կիսով չափ են երևում:»

16.Թիվ 2/42 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

1) «Վստահված անձը փորձում է միջամտել ընտրատեղամասի անդամի աշխատանքին:»

17.Թիվ 2/54 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա են հետևյալ գրառումները՝

1) «Արկղի տակ կան անցքեր, որոնք դիտորդի պահանջով փակվել են:»

2) «Սարքավորումները տեսանելի չեն տեսախցիկին:»

18.Թիվ 2/55 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա են հետևյալ գրառումները՝

1) «Քվետատուփի տակ առկա են անցքեր:»

2) «Տեսախցիկով տեխնիկական սարքավորումները լավ չեն երևում:»

19. Թիվ 2/56 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա են հետևյալ գրառումները՝

1) «Լրացուցիչ ցուցակում ընդգրկված ընտրողի անձը հաստատող փաստաթղթի ժամկետն ավարտվել է 2010թ. , սակայն ոստիկանության անձնագրային բաժինը տրամադրել է տեղեկանք: Լրացուցիչ ցուցակի ընտրողը մասնակցել է քվեարկությանը տեղեկանքի հիման վրա:»

2) «Լրացուցիչ ցուցակի ընտրողն իրավունք ունի ժամկետնանց անձնագրով /6 ամիս/ ժամկետով ներկայանալ ընտրության: Ներկայացված անձնագրի ժամկետը լրացել է 13 տարի առաջ: Լրացուցիչ ցուցակի ընտրողը մասնակցել է քվեարկությանը տեղեկանքի հիման վրա:»

3) «Մինչև հանձնաժողովի անդամի կողմից ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնելը ընտրողը քվեարկության ծրարը գցել է քվեատուփի մեջ:»

20.Թիվ 2/57 տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝
1) ««ՀայաՔվե» դիտորդի առաջարկով՝ փակել քվեատուփի անցքերը, որը մերժվեց: ԿԸՀ-ի կողմից ցուցումով չկա անհրաժեշտություն:»

2. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի եզրակացությունները

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 67-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն. «Եթե հանձնաժողովի անդամը, վստահված անձը կամ դիտորդը համարում են, որ քվեարկության նախապատրաստման, քվեարկության և արդյունքների ամփոփման ընթացքում կատարվել է սույն օրենսգրքով նախատեսված կարգի խախտում, ապա իրավունք ունեն պահանջելու, որ իրենց գնահատականն արձանագրվի տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:»:

Սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի գրառումը կատարվել է «Ականատես» դիտորդական առաքելության ներկայացուցիչ Տիգրան Սիմոնյանի կողմից, որում նշված է, որ թիվ 2/1 ընտրական տեղամաս է եկալ անհայտ անձ, ով քվեարկությանը չի մասնակցել, զրուցել է հանձնաժողովի նախագահի հետ և հեռացել: Հանձնաժողովի նախագահի կողմից տրված գրավոր բացատրագրի ուսումնասիրության և նախագահի հետ զրույցի արդյունքում պարզ դարձավ, որ նշված անձը քվեարկության սենյակ չի մտել, այլ գտնվել է քվեարկության սենյակից դուրս՝ միջանցքում , և հանձնաժողովի նախագահը ընդամենը նշված անձին ողջունել է, որը նկատել է դիտորդը և արձանագրել: Թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ նշված հանգամանքը չի կարող որակվել խախտում, և չի կարող ազդեցություն ունենալ քվեարկության արդյունքների վրա:

Սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի, 12-րդ, 15-րդ, 17-րդ, 18-րդ և 20-րդ կետերի 1-ին ենթակետերի գրառումների կապակցությամբ թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը փաստում է, որ համաձայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 17 հունիսի 2016թ. N 43-Ն որոշման և Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի 16-րդ կետով. «Կենտրոնական ընտրական հանձնաժողովը սահմանում է քվեատուփի նմուշը և տեխնիկական բնութագրերը:»: Թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ ներկայացված հանգամանքը որևէ ազդեցություն չի ունեցել քվեարկության արդյունքների վրա:

Սույն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի, 15-րդ,17-րդ,18-րդ կետերի 2-րդ ենթակետերի գրառումների կապակցությամբ թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը փաստում է, որ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 8-րդ հոդվածի 11.1 կետով. «Ազգային ժողովի ընտրությունների, ինչպես նաև համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրությունների ժամանակ կառավարության սահմանած կարգով անցկացված մրցույթի արդյունքում ընտրված մասնագիտացված կազմակերպությունն իրականացնում է ընտրական տեղամասերից քվեարկության ընթացքի և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացի տեսանկարահանում և միաժամանակյա համացանցային հեռարձակում՝ ուղիղ ժամանակային ռեժիմում՝ հատուկ ստեղծված կայքի (կայքերի) միջոցով: Կառավարությունը մասնագիտացված կազմակերպության հետ կնքում է

համապատասխան պայմանագիր, որով սահմանվում են նաև սույն մասով նախատեսված կարգով ընտրական տեղամասերից քվեարկության ընթացքի և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացի տեսանկարահանման և միաժամանակյա համացանցային հեռարձակման կարգն ու պայմանները, ինչպես նաև տեղամասերի ցանկը:

Հեռարձակման ժամանակ տեսագրության վրա պետք է տեսանելի լինեն իրական ժամանակը և տեղամասային կենտրոնի համարը:
Տեսանկարահանումը պետք է իրականացվի անշարժ տեսախցիկների միջոցով: Տեսախցիկների տեսադաշտում պետք է լինեն քվեատուփը, ընտրողների գրանցման, քվեարկության ծրարների ու քվեաթերթիկների հատկացման և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացները:»

Թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը փաստում է, որ թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ Մարատ Սևոյանը, նախագահի տեղակալ Աղավնի Կարապետյանը, հանձնաժողովի քարտուղար Լուսինե Հովհաննիսյանը, հանձնաժողովի անդամներ Նելլի Շառոյանը, Ռուդիկ Կարապետյանը,Գևորգ Բաղդասարյանը, Վարդան Վլասյանը և՛ քվեարկության սենյակի կահավորման ժամանակ, և՛ քվեարկության նախորդ օրը, և՛ քվեարկության օրը շրջայցեր են կատարել բոլոր ընտրական տեղամասեր, և նկարագրված հանգամանքին առնչվող խախտումներ չեն արձանագրել: Հետևաբար, նշված հանգամանքը չի կարող ազդեցություն ունենալ քվեարկության արդյունքների վրա:

Սույն որոշման 1-ին կետի 4-րդ և 5-րդ ենթակետերի և 9-րդ կետի 1-ին ենթակետերի գրառումները վերաբերում են տեղամասային ընտրական հանձնաժովի անդամների միջև գործառույթների բաշխման կարգին: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 11-ի թիվ 7-Ն որոշմամբ սահմանված է տեղամասային ընտրական հանձնաժողովում վիճակահանությունների անցկացման կարգը, որի 3-րդ կետով սահմանվում է, թե որ գործառույթներն են բաշխվում հանձնաժողովի անդամների միջև՝ նշելով, որ պատրաստվում են իրարից չտարբերվող թերթիկներ, որոնցից՝
«1) մեկի վրա նշում է «ցուցակ-1», իսկ ընտրական տեղամասում 1200-ից ավել ընտրողի դեպքում՝ հաջորդ թերթիկի վրա՝ «ցուցակ-2» բառերը,
2) մեկի վրա նշում է «քվեաթերթիկ-1», իսկ ընտրական տեղամասում 1200-ից ավել ընտրողի դեպքում՝ հաջորդ թերթիկի վրա՝ «քվեաթերթիկ-2» բառերը: Ստացիոնար բժշկական հաստատությունում և ձերբակալված անձանց պահելու վայրում շրջիկ արկղի միջոցով քվեարկություն կազմակերպելու դեպքում երկրորդ թերթիկի վրա նշվում է «քվեաթերթիկ և շրջիկ արկղ» բառերը,
3) մեկի վրա նշում է «քվեատուփ» բառը,
4) մեկի վրա նշում է «շրջիկ արկղ» բառերը՝ ստացիոնար բժշկական հաստատությունում և ձերբակալված անձանց պահելու վայրում շրջիկ արկղի միջոցով քվեարկություն կազմակերպելու դեպքում, եթե ընտրական տեղամասում ընտրողների թիվը չի գերազանցում 1200-ը:»:
Տեղամասային ընտրական հանձնաժողովները հանձնաժողովի անդամների աշխատասեղաններին փակցրել են ցուցանակներ, որոնք նշում են պարունակում համապատասխան գործառույթի վերաբերյալ («ցուցակ-1», «ցուցակ-2», «քվեաթերթիկ-1», «քվեաթերթիկ-2», «քվեատուփ») և որևէ ընտրողի չեն ուղղորդում:
Ելնելով վերոգրյալից, թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ նկարագրված հանգամանքներում որևէ խախտում առկա չէ, հետևաբար

որևէ ազդեցություն չի ունեցել քվեարկության արդյունքների վրա:

Սույն որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետի գրառումը կատարվել է թիվ 2/1 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Արմեն Մամաջանյանի կող-մից, որում նշված է, որ ընտրողը ստացել է սարքավորումից կտրոն և հրաժարվել է ընտրություն կատարել: Նախագահի հետ զրույցում պարզ դարձավ, որ ընտրողը քվեաթերթիկներ և ծրար ստանալուց հետո կանգնել է քվեարկության խցիկի կողքը և չի անցել քվեարկության խցիկ քվեարկություն կատարելու համար: Բաց քվեարկությունը կանխելու համար նախագահը հորդորել է ընտրողին անցնել քվեարկության խցիկ, ինչը զայրացրել է ընտրողին: Ընտրողը քվեարկության կտրոնը, քվեաթերթիկները և ծրարը թողել է քվեարկության խցիկում և հեռացել ընտրական տեղամասից: Ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասը 3-րդ պարբերությունը սահմանում է, որ «. . . Ընտրողն անցնում է քվեարկության խցիկ՝ քվեարկելու:»:

Ելնելով վերոգրյալից,թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը փաստում է, որ քվեարկելու տեսանկյունից խախտումը արձանագրվել է ընտրողի կողմից, ուստի այս դեպքը որևէ ազդեցություն չի ունեցել քվեարկության արդյունքների վրա:

Սույն որոշման 1-ին կետի 7-րդ ենթակետի գրառումը կատարվել է թիվ 2/1 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Արմեն Մամաջանյանի կող-մից, որում նշված է, որ ընտրողը ծրարը գցել է քվեատուփի մեջ հանձնաժողովի անդամի կողմից քվեաթերթիկի վրա առանց դրոշմանիշ փակցնելու : Հանձնաժողովի նախագահի կողմից տրված գրավոր բացատրագրի ուսումնասիրության և նախագահի հետ զրույցի արդյունքում պարզ դարձավ, որ ընտրողը բավականին ագրեսիվ վարքագիծ դրսևորելով մոտեցել է քվեատուփին և չսպասելով հանձնաժողովի անդամի ցուցումներին, ով այդ պահին իրականացրել է քվեաթերթիկի վրա դրոշմանիշ փակցնելու գործառույթը, բացել է քվեատուփի ճեղքը և հանձնաժողովի անդամի կողմից քվեաթերթիկի վրա առանց դրոշմանիշ փակցնելու ծրարը գցել քվեատուփի մեջ: Ընտրողը քվեարկության կտրոնը տվել է հանձնաժողովի անդամին, սակայն ծրարը չի դրել սեղանին, որպեսզի քվեաթերթիկի վրա դրոշմանիշ փակցվի: Սույն որոշման 1-ին կետի 7-րդ ենթակետի գրառման կապակցությամբ թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը փաստում է, որ ընտրողն իրականացրել է ընտրելու իր իրավունքը, քվեարկելու տեսանկյունից խախտումը արձանագրվել է ընտրողի կողմից, ուստի այս դեպքը որևէ ազդեցություն չի ունեցել քվեարկության արդյունքների վրա:

Սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի գրառումը կատարվել է թիվ 2/3 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների կողմից, այն մասին որ ընտրական տեղամասում տեղի է ունեցել ընտրողների կողմից քվեարկության կարգի խախտում: Հանձնաժողովի նախագահ Լյովա Առուստամյանի հետ զրույցում թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը պարզեց, որ քվեարկության մասնակցող երկու ընտրողներ քվեարկության սենյակում ցուցաբերել են ագրեսիվ վարքագիծ՝ հանձնաժողովի անդամներին ուղղված վիրավորանքներ հնչեցնելով: Ընտրողները պատառոտել են իրենց հատկացրած քվեաթերթիկները, ծրարները, և դրանք քցել քվերկության խցիկում տեղադրված տուփի մեջ: Հանձնաժողովի

նախագահը քվեարկության սենյակ է հրավիրել ոստիկանության աշխատակիցներին և դեպքը արձանագրել գրանցամատյանում:

Սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի գրառման կապակցությամբ թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը փաստում է, որ ընտրողներն իրականացրել են ընտրելու իրենց իրավունքը, քվեարկելու տեսանկյունից խախտումը արձանագրվել է ընտրողների կողմից, դա եղել է եզակի դեպք, ինչով պայմանավորված նշված դեպքը որևէ ազդեցություն չի ունեցել քվեարկության արդյունքների վրա:

Սույն որոշման 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի գրառումները կատարվել է «Ականատես» դիտորդական առաքելության ներկայացուցիչ Տիգրան Սուրենյանի կողմից: Թիվ 2/4 ընտրական տեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանի 1-ին և 2-րդ գրառումների կապակցությամբ թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը փաստում է, որ Ընտրական օրենսգրքի 22-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Արգելվում են քվեարկության օրը տեղամասային կենտրոնին հարող տարածքում մինչև 50 մետր շառավղով խմբերով հավաքվելը, տեղամասային կենտրոնի մուտքին հարող տարածքում մեքենաների կուտակումը: Սույն մասի դրույթների կատարումը, ինչպես նաև այդ տարածքում հասարակական կարգի պահպանումն ապահովում են տեղամասային կենտրոնում ծառայություն իրականացնող ոստիկանության ծառայողները՝ անկախ ընտրական հանձնաժողովի պահանջից:»:

Ընտրական օրենսգրքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ոստիկանության կենտրոնական և տարածքային մարմինները, դրանց ծառայություններն ու ստորաբաժանումները պարտավոր են ապահովել ընտրությունների անցկացման բնականոն ընթացքը, ընտրական հանձնաժողովների ու դրանց անդամների անկաշկանդ գործունեությունը: Ոստիկանությունը ընտրությունների հետ կապված միջոցառումներում ապահովում է պատշաճ կարգ ու կանոն, ընտրական հանձնաժողովի նախագահի պահանջով աջակցում հանձնաժողովներին, ապահովում է ընտրական փաստաթղթերի անվտանգ տեղափոխումն ու դրանց պահպանումն ընտրական հանձնաժողովներում:»: Նշված իրավանորմերի վերլուծությունից ակնհայտ է, որ տեղամասային կենտրոնին հարող տարածքում մինչև 50 մետր շառավղով խմբերով հավաքվելը, տեղամասային կենտրոնի մուտքին հարող տարածքում մեքենաների կուտակումը, ինչպես նաև այդ տարածքում հասարակական կարգի պահպանումն ապահովում են տեղամասային կենտրոնում ծառայություն իրականացնող ոստիկանության ծառայողները՝ անկախ ընտրական հանձնաժողովի պահանջից:

Ելնելով վերոգրյալից, թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը փաստում է, որ նկարագրված հանգամանքներում որևէ խախտում առկա չէ, հետևաբար որևէ ազդեցություն չի ունեցել քվեարկության արդյունքների վրա:

Սույն որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետի գրառումը կատարվել է թիվ 2/9 տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից, այն մասին որ ընտրական տեղամասում տեղի է ունեցել ընտրողի կողմից քվեարկության կարգի խախտում:Հանձնաժողովի նախագահ Սարգիս Մազմանյանի հետ զրույցում թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը պարզեց, որ ընտրողը քվեարկության խցիկից դուրս գալուց հետո մոտեցել է ինքնասոսնձվող դրոշմանիշ

փակցնող և քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի անդամին: Հանձնաժողովի անդամը ընտրողից պահանջել է քվեարկության կտրոնը, սակայն ընտրողը այն չի ներկայացրել, պատճառաբանելով որ այն ճղել և թողել է քվեարկության խցիկում տեղադրված արկղի մեջ: Ընտրողին զգուշացվել է հե՛տ վերադառնալ քվեարկության խցիկ և այնտեղից բերել քվարկության կտրոնը, սակայն ընտրողը ճղել է ծրարը և քվեաթերթիկը, հեռացել ընտրական տեղամասից: Հանձնաժողովի նախագահը քվերկության խցիկում փնտրել , գտել է քվերկության կտոնը և հանձնել քվատուփի համար պատասխանատու հանձնաժողովի անդամին:

Սույն որոշման 4-րդ կետի 1-ին գրառման կապակցությամբ թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը փաստում է, որ ընտրողն իրականացրել է ընտրելու իր իրավունքը, քվեարկելու տեսանկյունից խախտումը արձանագրվել է ընտրողի կողմից, ուստի այս դեպքը որևէ ազդեցություն չի ունեցել քվեարկության արդյունքների վրա:

Սույն որոշման 5-րդ կետի 1-ին ենթակետի գրառումը կատարվել է «Ազգային առաջընթաց» կուսակցություն վստահված անձ Արմեն Սերգեյի Մկրտչյանի և «Ապրելու երկիր» կուսակցություն վստահված անձ Էդիկ Վազգենի Հովհաննիսյանի կողմից: Սույն որոշման 5-րդ կետի 2-րդ ենթակետի գրառումը կատարվել է «Ազգային առաջընթաց» կուսակցություն վստահված անձ Արմեն Սերգեյի Մկրտչյանի կողմից: Թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը բանավոր զրույց է ունեցել թիվ 2/12 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Արտակ Հովհաննեսի Ղուկասյանի հետ, ով իր զրույցում նշել է, որ գրանցամատյանում վստահված անձանց կողմից կատարված գրառման դեպքերը իր կողմից չի նկատվել: Հանձնաժողովի նախագահը նշեց, որ այլ անձինք, ինչպես նաև ոստիկանության աշխատակիցները, ովքեր, որ իրավունք չեն ունեցել գտնվելու քվեարկության սենյակում, քվեարկության սենյակ չեն մտել, նման դեպքեր իր կողմից չի նկատել:

Ելնելով վերոգրյալից, թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ նշված հանգամանքները որևէ ազդեցություն չեն ունեցել քվեարկության արդյունքների վրա:

Սույն որոշման 6-րդ կետի 1-ի ենթակետի գրառումը կատարվել է թիվ 2/16 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Յուրիկ Հրաչիկ Մկրտչյանի կողմից, որը վերաբերում է քվեարկության կարգին: Թիվ 2/16 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Անահիտ Վալտերի Հովհաննիսյանի հետ զրույցում թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը պարզեց, որ ընտրողը քվեարկության խցիկից դուրս գալուց հետո մոտեցել է ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի անդամին և բարձրաձայն հայտարարել, որ չի պատրաստվում ո՛չ քվեարկության կտրոնը տալ, և ո՛չ էլ ծրարը քվեաթերթիկով: Ընտրողը հեռացել է ընտրական տեղամասից:

Սույն որոշման 6-րդ կետի 1-ին ենթակետի գրառման կապակցությամբ թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը փաստում է, որ ընտրողն իրականացրել է ընտրելու իր իրավունքը, քվեարկելու տեսանկյունից խախտումը արձանագրվել է ընտրողի կողմից, ուստի այս դեպքը որևէ ազդեցություն չի ունեցել քվեարկության արդյունքների վրա:

Սույն որոշման 6-րդ կետի 2-րդ ենթակետի գրառումը կատարվել է թիվ 2/16 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Արթուր Տիգրանի Շահբազյանի կողմից, որում նշված է, որ ընտրողը տեխնիկական սարքավորումից տպված կտրոնը

չի ներկայացրել հանձնաժողովի անդամին, որից հետո տվյալ ընտրողի ծրարը մարվել է հանձնաժողովի անդամների և ընտրական տեղամասում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ: Ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ պարբերությունը սահմանում է, որ «. . . Եթե ընտրողը չի ներկայացնում քվեարկության կտրոն, ապա ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամը տեղեկացնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին, որն ընտրողից վերցնում է քվեարկության ծրարը, անհապաղ մարում է՝ առանց ծրարի պարունակությունն ստուգելու:»: Ելնելով վերոգրյալից, թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը փաստում է, որ քվեարկելու տեսանկյունից խախտումը արձանագրվել է ընտրողի կողմից, ուստի այս դեպքը որևէ ազդեցություն չի ունեցել քվեարկության արդյունքների վրա:

Սույն որոշման 7-րդ կետի 1-ին ենթակետի գրառումը կատարել է թիվ 2/17 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Արմեն Մկրտչյանի կողմից: Հանձնաժողովի նախագահի հետ զրույցում թիվ 2 ընտրական հանձնաժողովը պարզեց, որ ընտրողը քվերկության խցիկից դուրս գալուց հետո ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի անդամին ներկայացրել է դատարկ ծրար՝ առանց քվեաթերթիկի, պատճառաբանելով որ ոչ մի կուսակցության օգտին չի ուզում իր քվեն տալ, և դատարկ ծրարը գցել քվեատուփ:

Սույն որոշման 7-րդ կետի 1-ին ենթակետի գրառման կապակցությամբ թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը փաստում է, որ ընտրողն իրականացրել է ընտրելու իր իրավունքը, քվեարկելու տեսանկյունից խախտումը արձանագրվել է ընտրողի կողմից, ուստի այս դեպքը որևէ ազդեցություն չի ունեցել քվեարկության արդյունքների վրա:

Սույն որոշման 8-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի գրառումները կատավել են թիվ 2/18 տեղամասային ընտրական հանձնաժողովի և «Ականատես» դիտորդական առաքելության ներկայացուցիչ Աիդա Օրդինյանի, «Ականատես» դիտորդական առաքելության ներկայացուցիչ Տիգրան Սիմոնյանի կողմից: Թիվ 2/18 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հետ զրույցում թիվ 2 տեղամասային ընտրական հանձնաժողովը պարզեց, որ ընտրողը քվեարկության խցիկում գտնվել է երկար ժամանակ և «Ականատես» դիտորդական առաքելության ներկայացուցիչ Աիդա Օրդինյանի մոտ կասկածներ է առաջացել որ ընտրողը հեռախոսով նկարում է իր քվեարկությունը: Քվեարկության խցիկից դուրս գալուց հետո ընտրողը հայտարարել, որ իր նախընտրած կուսակցության քվեաթերթիկը չի գտնում: Հանձնաժողովի նախագահը պահանջել է ընտրողից հետ վերադարձնել իրեն տված բոլոր քվաթերթիկները և ծրարը: Ընտրողի կողմից հետ վերադարձրած քվաթերթիկները և ծրարը մարվել է և նրան հատկացվել նոր քվաթերթիկներ և ծրար քվեարկությանը մասնակցելու համար:Դիտորդի մոտ երկրորդ անգամ ևս կասկածներ է առաջացել, որ ընտրողը հեռախոսով նկարում է իր քվեարկությունը, քանի որ քվեարկության խցիկից լսել է հեռախոսով նկարելու ձայներ: Այդ մասին դիտորդը բարձրաձայնել է և հանձնաժողովի նախագահի ուշադրությունը հրավիրել նշված դեպքի վրա: Ընտրողը քվեարկության խցիկից դուրս գալուց հետո մոտեցել է ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի անդամին և չհեքելով դիտորդի կողմից բարձրաձայնած կասկածները՝ ցույց է տվել իր հեռախոսը, ասելով, որ քվերկության խցիկում նա ընդամենը

հեռախոսով փնտրել է տեղեկություն, թե, որ համարն է կրում իր նախընտրած կուսակցությունը: Ընտրողը իրականացրել է քվերկությանը մասնակցելու իր իրավունքը և հեռացել ընտրական տեղամասից:

Ելնելով վերոգրյալից, թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը փաստում է, որ նկարագրված հանգամանքներում որևէ խախտում առկա չէ, հետևաբար որևէ ազդեցություն չի ունեցել քվեարկության արդյունքների վրա:

Սույն որոշման 8-րդ կետի 4-րդ ենթակետերի գրառումը կատավել են թիվ 2/18 տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից: Թիվ 2/18 տեղամասային ընտրական հանձնաժողովի հետ զրույցում, թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը պարզեց, որ ձեռնափայտով տարեց ընտրողը չիմանալով քվեարկության կարգը քվեարկության սենյակից փորձել է դուրս հանել մեկ քվեաթերթիկ՝ ծալած վիճակում :Դա նկատել է ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի անդամը և տեղեկացրել հանձնաժողովի նախագահին: Հանձնաժողովի նախագահը ընտրողին բացատրել է քվեարկության կարգը և ընտրողից պահանջել քվաթերթիկը թողնել քվեարկության սենյակում: Ընտրողը քվեաթերթիկը տվել է հանձնաժողովի նախագահին և հեռացել ընտրական տեղամասից:

Սույն որոշման 8-րդ կետի 4-ին ենթակետի գրառման կապակցությամբ թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը փաստում է, որ ընտրողն իրականացրել է ընտրելու իր իրավունքը, քվեարկելու տեսանկյունից խախտումը արձանագրվել է ընտրողի կողմից, ուստի այս դեպքը որևէ ազդեցություն չի ունեցել քվեարկության արդյունքների վրա:

Սույն որոշման 9-րդ կետի 2-րդ ենթակետի գրառման կապակցությամբ թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը փաստում է, որ Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 13-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը սահմանում են. «2. Ազգային ժողովի, համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրությունների ժամանակ լիազոր մարմինն ընտրողների նախնական ցուցակը՝ ըստ ընտրական տեղամասերի, քվեարկության օրվանից 40 օր առաջ, արտահերթ ընտրությունների դեպքում՝ 20 օր առաջ, իսկ ընտրողների վերջնական ցուցակը՝ ըստ ընտրական տեղամասերի, քվեարկության օրվանից (ներառյալ՝ արտահերթ ընտրությունների դեպքում) 7 օր առաջ տեղադրում է համացանցում՝ www.police.am հասցեով: Համացանցում ըստ ընտրական տեղամասերի տեղադրված ընտրողների ցուցակները պետք է ունենան ներբեռնելու հնարավորություն:

3. Տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողը քվեարկության օրվանից 40 օր առաջ, իսկ արտահերթ ընտրությունների դեպքում՝ 20 օր առաջ ընտրողների ցուցակը փակցնում է տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում:...»

Թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը փաստում է, որ թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ Մարատ Սևոյանը, նախագահի տեղակալ Աղավնի Կարապետյանը, հանձնաժողովի քարտուղար Լուսինե Հովհաննիսյանը, հանձնաժողովի անդամներ Նելլի Շառոյանը, Ռուդիկ Կարապետյանը, Գևորգ Բաղդասարյանը, Վարդան Վլասյանը և՛ քվեարկության սենյակի կահավորման ժամանակ, և՛ քվեարկության նախորդ օրը, և՛ քվեարկության օրը շրջայցեր են կատարել բոլոր ընտրական տեղամասեր, այդ թվում նաև թիվ 2/24 տեղամասային կենտրոն և նկարագրված հանգամանքին առնչվող խախտում չեն

արձանագրել: Հետևաբար, նշված հանգամանքը չի կարող ազդեցություն ունենալ քվեարկության արդյունքների վրա:

Սույն որոշման 8-րդ և 10-րդ կետի 1-ին ենթակետի գրառումները կատարվել են թիվ 2/18 և 2/26 տեղամասային ընտրական հանձնաժողովների կողմից, որոնք վերաբերում են սխալմամբ այլ անձի փոխարեն ստորագրելու դրվագներին:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված կարգի համաձայն՝

«8. Մասնագետը տպված քվեարկության կտրոնը ընտրողի անձը հաստատող փաստաթղթի հետ վերադարձնում է ընտրողին, որից հետո ընտրողը մոտենում է ընտրողների գրանցումն իրականացնող հանձնաժողովի համապատասխան անդամին: Ընտրողների գրանցումն իրականացնող հանձնաժողովի անդամն ընտրողից վերցնում է քվեարկության կտրոնը, ընտրողների ցուցակում գտնում է ընտրողի տողը, ընտրողը ստորագրում է իր տվյալների դիմաց՝ ընտրողի ստորագրության համար նախատեսված սյունակում և իր անհատական կնիքն է դնում համապատասխան սյունակում, որից հետո անհատական կնիքով կնքում քվեարկության կտրոնը և այն փոխանցում ընտրողին»:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 9-ի «Ընտրողների ցուցակի «Լրացուցիչ նշումներ» սյունակում կատարվող նշումների մասին» թիվ 126-Ն որոշման 2-րդ կետի համաձայն՝

«2. Տեղամասային ընտրական հանձնաժողովի ընտրողների գրանցման համար պատասխանատու հանձնաժողովի անդամը՝ տեղեկացնելով տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին, տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված և քվեարկության կտրոն ստացած՝ քվեարկությանը չմասնակցած այն ընտրողին, որի տվյալների դիմաց ընտրողների ցուցակում առկա է ստորագրություն քվեարկությանը մասնակցելու վերաբերյալ, հնարավորություն է տալիս ստորագրելու ընտրողների ցուցակի «Լրացուցիչ նշումներ» սյունակում՝ իր տվյալների դիմաց՝ ստորագրության կողքին դնելով իր անհատական կնիքը:»:

Վերլուծության հաշվառմամբ՝ թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ թույլ է տրվել Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված՝ ընտրողների ցուցակում ընտրողի տողը գտնելու և ընտրողի կողմից իր տվյալների դիմաց ստորագրություն դնելու կարգի խախտում, սակայն, հիմք ընդունելով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի թիվ 126-Ն որոշման 2-րդ կետը, հնարավորություն է տվել ստորագրելու ընտրողների ցուցակի «Լրացուցիչ նշումներ» սյունակում՝ իր տվյալների դիմաց՝ ստորագրության կողքին դնելով իր անհատական կնիքը, ուստի, թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ նշված հանգամանքները որևէ ազդեցություն չեն ունեցել քվեարկության արդյունքների վրա:

Սույն որոշման 11-րդ կետի 1-ին ենթակետի գրառումը կատարվել է «Ապրելու Երկիր» կուսակցության վստահված անձ Արտուշ Աբելյանի կողմից: Իսկ սույն որոշման 11-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի գրառումները, կատարվել է թիվ 2/27 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Նունե Պետրոսյանի կողմից, այն վերաբերում է սույն որոշման 11-րդ կետի 1-ին ենթակետի գրառմանը: Սույն որոշման 11-րդ կետի 1-ին ենթակետի գրառման կապակցությամբ թիվ 2/27 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Նունե Պետրոսյանը և հանձնաժողովի քարտուղար Տաթև Ղարաբաղցյանը 2023 թվականի սեպտեմբերի 19-ին ներկայացրել են գրավոր բացատրագրեր: Ներկայացված բացատրագրերում և՛

նախագահը, և՛ քարտուղարը գրանցամատյանում առկա գրառման հետ կապված դեպքը ներկայացրել են հետևյալ կերպ: Ընտրողը քվերկության խցիկից դուրս է եկել և պատճառաբանել, որ չի կարողանում քվաթերթիկը տեղադրել ծրարում: Բոլորի ներկայությամբ ընտրողը ցանկացել է քվաթերթիկը հանել և նորից տեղադրել ծրարի մեջ: Որից հետո հանձնաժողովի անդամները ընտրողին բացատրել են, որ դա համարվում է խախտում, և, որ նա մտնի քվարկության խցիկ և այդ ամենը կատարի քվեարկության խցիկում: Սակայն ընտրողը չի ցանկացել մտնել քվեարկության խցիկ, բոլորի ներկայությամբ ծրարից հանել է քվաթերթիկը : Ընտրողի կողմից բաց՝ այլ անձանց համար տեսանելի ձևով քվեարկելու պատճառով, հանձնաժողովի նախագահը ընտրողից վերցրել է ծրարը և առանց դրա պարունակությունը ստուգելու մարել այն:Այդ ամենից հետո հանձնաժողովի նախագահը քվեարկության սենյակ է հրավիրել ոստիկանության աշխատակցին և խնդրել հեռացնել ընտրողին քվեարկության սենյակից:

Թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ նկարագրված հանգամանքում առկա է Ընտրական օրենսգրքով սահմանված քվեարկության կարգի խախտում, վերջինս կրել է եզակի բնույթ, ուստի որևէ ազդեցություն չի ունեցել քվեարկության արդյունքների վրա:

Սույն որոշման 13-րդ կետի 1-ին ենթակետի գրառումը, կատարվել է թիվ 2/33 տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովի նախագահ Արամ Ջաղինյանի հետ զրույցում թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը պարզեց, որ ընտրողը քվերակության խցիկից դուրս գալուց հետո մոտեցել է ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի անդամին և ներկայացրել միայն քվեարկության կտրոնը, իսկ քվեաթերթիկը ծրարով պատռված թողել քվեախցում: Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրողին առաջարկվել է ստանալ նոր ծրար և քվեաթերթիկներ քվեարկությանը մասնակցելու համար, սակայն նա հրաժարվել է: Ընտրողը տեխնիկական սարքավորումից տպված կտրոնը փոխանցել է հանձնաժողովի անդամին և հեռացել ընտրական տեղամասից:

Ելնելով վերոգրյալից,թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը փաստում է, որ քվեարկելու տեսանկյունից խախտումը արձանագրվել է ընտրողի կողմից, ուստի այս դեպքը որևէ ազդեցություն չի ունեցել քվեարկության արդյունքների վրա:

Սույն որոշման 13-րդ կետի 2-րդ ենթակետի գրառումը, կատարվել է թիվ 2/33 տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից:Հանձնաժողովի նախագահ Արամ Ջաղինյանի հետ զրույցում թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը պարզեց, որ ինքնասասնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի անդամը քվեաթերթիկի վրա ինքնասոսնձվող դրոշմանիշը փակցնելիս դրոշմանիշի մի փոքր հատվածը կպել է մատին, որի մասին հանձնաժողովի քարտուղարի կողմից գրանցամատյանում կատարվել է գրառում: Դա եղել են եզակի դեպք, ինչով պայմանավորված նշված հանգամանքը չի կարող որևէ ազդեցություն ունենալ քվեարկության արդյունքների վրա :

Սույն որոշման 13-րդ կետի 3-րդ ենթակետի գրառումը կատարվել է թիվ 2/33 տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից: Թիվ 2/33 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Արամ Ջաղինյանի և հանձնաժողովի քարտուղար Շուշաննա Մանուկյանի հետ զրույցում թիվ 2 ընտրատարածքային

ընտրական հանձնաժողովը պարզեց, որ թիվ 2/33 ընտրական տեղամասում ընտրողներից ստացված տեխնիկական սարքավորմամբ տպված կտրոնների թիվը կազմել է 396 իսկ քվեարկության մասնակիցների ընդհանուր թիվը կազմել է 396, սակայն հանձնաժողովի կողմից թյուրիմացաբար լրացվել է 395, որի պատճառը հանդիսացել է հանձնաժողովի կողմից ընտրողների ցուցակներից քվեարկության մասնակիցների ընդհանուր թվի՝ ստորագրությունների հիման վրա ոչ ճիշտ հաշվարկը:

Թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ նկարագրված հանգամանքում առկա է Ընտրական օրենսգրքով սահմանված տեղամասային ընտրական հանձնաժողովի՝ քվեարկության արդյունքների արձանագրությունը լրացնելու կարգի խախտում, վերջինս կրել է եզակի բնույթ, ուստի որևէ ազդեցություն չի ունեցել քվեարկության արդյունքների վրա:

Սույն որոշման 14-րդ կետի 1-ին ենթակետի գրառումը, կատարվել «Ականատես» դիտորդական առաքելության ներկայացուցիչ Իրինա Ենոքյանի կողմից, որը վերաբերում է ընտրական տեղամասում քվեարկության սենյակի կահավորմանը: Թիվ 2/35 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Մարիանա Աբրահամյանի հետ զրույցում պարզ դարձավ, որ քվեարկության օրը չի խաթարվել քվեարկության բնականոն ընթացքը, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները, ինչպես նաև քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք իրենց տեսադաշտում են պահել տեխնիկական սարքավորումները, քվեատուփը, քվեարկության խցիկները (պայմանով, որ չխախտվի քվեարկության գաղտնիությունը): Թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը փաստում է, որ թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ Մարատ Սևոյանը, նախագահի տեղակալ Աղավնի Կարապետյանը, հանձնաժողովի քարտուղար Լուսինե Հովհաննիսյանը, հանձնաժողովի անդամներ Նելլի Շառոյանը, Ռուդիկ Կարապետյանը,Գևորգ Բաղդասարյանը, Վարդան Վլասյանը և՛ քվեարկության սենյակի կահավորման ժամանակ, և՛ քվեարկության նախորդ օրը, և՛ քվեարկության օրը շրջայցեր են կատա-րել բոլոր ընտրական տեղամասեր, այդ թվում նաև թիվ 2/35 տեղամասային կենտրոն և նկարագրված հանգամանքին առնչվող խախտում չեն արձանագրել: Հետևաբար, նշված հանգամանքը չի կարող ազդեցություն ունենալ քվեարկության արդյունքների վրա:

Սույն որոշման 16-րդ կետի 1-ին ենթակետի գրառումը կատարվել է «Հանրային ձայն» կուսակցության վստահված անձ Աշոտ Վաղարշյանի կողմից: Թիվ 2/42 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Էդգար Հակոբյանի հետ զրույցում թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը պարզեց, որ վստահված անձ Աշոտ Վաղարշյանի կողմից կատարած գրառումը չի համապատասխանում իրականությանը, որևէ վստահված անձ չի միջամտել հանձնաժողովի անդամների աշխատանքներին: Հետևաբար, նշված հանգամանքը չի կարող ազդեցություն ունենալ քվեարկության արդյունքների վրա:

Սույն որոշման 19-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետի գրառումները, որոնք կատարվել են «ՀայաՔվե» դիտորդական առաքելության ներկայացուցիչ Սամվել Հակոբյանի և «Ապրելու Երկիր» կուսակցության վստահված անձ Զվարթ Սարգսի Բաբախանյանի կողմից, վերաբերում են ընտրողի ընտրական իրավունքին և քվեարկության կարգին: Ընտրական օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է « Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների

ժամանակ ընտրելու իրավունք ունեն քվեարկության օրը 18 տարին լրացած՝ ընտրությունն անցկացվող համայնքի բնակչության ռեգիստրում՝

1) մինչև քվեարկության օրն առնվազն 6 ամսվա հաշվառում ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները.

2) մինչև քվեարկության օրն առնվազն վեց ամսվա հաշվառում չունեցող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, որոնք համայնքում հաշվառվել են պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվելու կամ ազատազրկման ձևով պատիժը կրելուց ազատվելու հանգամանքներով պայմանավորված.

3) մինչև քվեարկության օրն առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձինք (այսուհետ՝ քաղաքացիություն չունեցող ընտրող):...»:

Նաև, Ընտրական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասը սահմանում են «1. Քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովը սույն օրենսգրքով սահմանված կարգով կազմում է ընտրողների լրացուցիչ ցուցակ:

2. Ընտրողների լրացուցիչ ցուցակը կազմվում է, եթե քվեարկության օրն ընտրական տեղամաս են ներկայանում ընտրողներ, որոնք ընդգրկված չեն ընտրողների (այդ թվում՝ ստացիոնար բուժման մեջ գտնվող անձանց լրացուցիչ) ցուցակներում և ներկայացնում են սույն օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված՝ քվեարկության օրը կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակում ընդգրկվելու մասին լիազոր մարմնի տեղեկանք կամ դատական ակտ:»

Ելնելով վերոգրյալից, թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը փաստում է, որ նկարագրված հանգամանքում որևէ խախտում առկա չէ, թիվ 2/56 տեղամասային ընտրական հանձնաժողովի գործողությունները համապատասխանում են Ընտրական օրենսգրքով սահմանված կանոնակարգումներին, հետևաբար որևէ ազդեցություն չի ունեցել քվեարկության արդյունքների վրա:

Սույն որոշման 19-րդ կետի 3-րդ ենթակետի գրառումը, կատարվել է թիվ 2/56 տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղար Արաքսյա Գագիկի Գեղամյանի կողմից: Թիվ 2/56 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Աիդա Վանիկի Գեվորգյանի հետ զրույցում պարզ դարձավ, որ ինքնասասնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի անդամ Զավեն Ազատի Կարապետյանը, մինչև ընտրողից ստացել է տեխնիկական սարքավորման միջոցով տպված քվեարկության կտրոնը, ընտրողը քվեարկության ծրարը արագ և աննկատ գցել է քվեատուփի մեջ: Նշենք, որ այս դեպքը միակն էր և եզակին, որը չէր կարող ազդել ընտրությունների արդյունքների վրա:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 74-րդ հոդվածի 6-րդ մասով՝ թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում կազմավորված տեղամասային

ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրը՝ 17.09.2023թ., արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատականները չեն ազդել տեղամասում քվեարկության արդյունքների վրա:

Թիվ 2 ընտրատարածքային ընտրական
հանձնաժողովի նախագահ՝ **Մարատ Սևոյան**